ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՀԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 17-ը նոյեմբերի 2017թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Տերյան)

1. Մասնակիցների՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ.Տերյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգում, բացառությամբ «Էրիզ» ՍՊԸ բոլոր մասնակիցների՝ «Հադրութ 1» ՍՊԸ-ի, «Դավիթ 84» ՓԲԸ, «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ, «Մատինյանի Նշխար» ՍՊԸ, «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ և «Էդել» ՍՊԸ կողմից հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Հադրութ 1» ՍՊԸ փաստաթղթերում բացակայում են հրավերող նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող ծանոթություն դաշտը, «Դավիթ 84» ՓԲԸ փաստաթղթերում բացակայում են հրավերող նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող ծանոթություն դաշտը, ինչպես նաև ներկայացված նմանատիպ պայմանագրի երկկողմանի կնիքները տեսանելի չեն, «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ փաստաթղթերում բացակայում են հրավերող նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող ծանոթություն դաշտը, ինչպես նաև բացակայում են ներկայացված 2014թ. և 2015թ. նմանատիպ պայմանագրերի հաշիվ-ապրանքագրերը, «Մատինյանի Նշխար» ՍՊԸ փաստաթղթերում բացակայում են հրավերող նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող ծանոթություն դաշտը, ինչպես նաև բացակայում են պայմանագրին կից համաձայնագրերը և դրանց կատարումը հավաստող փաստաթղթերը /հանձնման-ընդունման արձանագրությունները կամ ընդունող կողմի հավաստումը բարեխիղճ կատարման վերաբերյալ/, «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ փաստաթղթերում հավելված 6-ում և հավելված 6.1-ում բացակայում են էլեկտրոնային ստորագրությունները, տեխնիկական բնութագրերում բացակայում են հրավերող նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող ծանոթություն դաշտը և հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից, «Էդել» ՍՊԸ փաստաթղթերում, քանի որ կազմակերպությունը ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագրով «ՍԱՍՆԱՌ» ՍՊԸ հետ, որտեղ և գործընկեր-1-ը և գործընկեր-2-ը պետք է ապահովեն «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը, ուստի անհրաժեշտ է, որ գործընկեր-1-ը՝ «ԷԴԵԼ» ՍՊԸ, նույնպես ներկայացնի նմանատիպ պայմանագիր, դրանց հաշիվ-ապրանքագրերը և այդ պայմանագրի կատարումը հավաստող փաստաթղթերը: Հանձնաժողովը կասեցրել է նիստը և 20.11.2017թ. վերոնշյալ մասնակիցներին ծանուցել են մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Վերոնշյալ մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները, բացառությամբ «ԷԴԵԼ» ՍՊԸ և «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ: «ԷԴԵԼ» ՍՊԸ ներկայացրել է պարզաբանում, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի ընդունվել որպես հիմնավորում: «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ շտկել է անհամապատասխանությունները, բացառությամբ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջից, ուստի «ԷԴԵԼ» ՍՊԸ և «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվեցին: «Էրիզ» ՍՊԸ սահմանված ժամկետում ներկայացրել է նաև բանկային երաշխիքի բնօրինակը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության

համաձայն մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամտամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են, բացառությամբ «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ, որտեղ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

1.2 23.11.2017թ. նիստին, քանի որ «ԷԴԵԼ» ՍՊԸ և «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ հայտերը մերժվել են, 25, 26, 28, 64, 67, 77, 78 չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Էրիզ» ՍՊԸ, 72, 75, 76 չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Դավիթ 84» ՓԲԸ, 79 չափաբաժնով՝ «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ:Քանի որ մասնակիցները արդեն ներկայացրել են որակավորումները հիմնավորող փաստաթղթերը, մասնակիցներից պահանջվել է միայն ապրանքների տեխնիկական բնութագրերը, իսկ «Դավիթ 84» ՓԲԸ նաև նմանատիպ պայմանագրերի, դրանց հաշիվ-ապրանքագրերի և բարեխիղճ կատարումը հավաստող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Տերյան)

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող Վ. Գասպարյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Տ. Հարոյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՀԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 22-ը հունվարի 2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:
Բացակայում է՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարությանը,

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Տերյան)

1. Մասնակիցների՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ.Տերյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգում, քանի որ «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ և «Էդել» ՍՊԸ հայտերը մերժվել են՝ «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ և «Էդել» ՍՊԸ 05.12.2017թ. ներկայացրել են համապատասխանաբար ԳԲԽ-ԱՄ-2017/46 և ԳԲԽ-ԷՍ-2017/49 բողոքներ, որոնց արդյունքում ընթացակարգը կասեցվել էր: «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ մասով 21.12.2017թ. ԳԲԽ որոշմամբ «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ բողոքը մերժվել էր: «Էդել» ՍՊԸ մինչև ԳԲԽ որոշումը նույն բողոքով 11.12.2017թ. դիմել է նաև Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Դատարանը վարույթը ընդունել է և գործի քննությունը նշանակել 10.04.2018թ.: 21.12.2017թ ՀՀ ԱՆ հարկադիր կատարման ծառայության որոշմամբ արգելվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը 72, 75, 76, 78, 79 չափաբաժինների մասով որևէ գործողություն կատարել և տուժանք գանձել:

1.2 22.01.2018թ.՝ որակավորման նիստի ավարտի օրը հիմք ընդունելով 1.1 կետով նշված որոշումները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները, բացառությամբ «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ՝ «Էրիզ» ՍՊԸ նաև 25, 26, 28, 64, 67, 77 չափաբաժինների մասով և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Իսկ 72, 75, 76, 78, 79 չափաբաժինների մասով դատարանի որոշումից հետո:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Տերյան)

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Վ. Գասպարյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան